

**ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ИСТОЧНИКИ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ  
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

*Р. Х. АКОПЯН*

Статья посвящена законодательным источникам конституционной ответственности в Республике Армения. Анализируются избирательный кодекс, судебный кодекс РА, регламент Национального Собрания РА, законы о конституционном суде, об общественных организациях, политических партиях и фондах, о референдуме и местном референдуме, о гражданской и муниципальной службе, о защитнике прав человека, о прокуратуре, о центральном банке, о местном самоуправлении и другие нормативно-правовые акты РА в качестве законодательных источников института конституционной ответственности.

**THE LEGISLATIVE SOURCES OF THE CONSTITUTIONAL RESPONSIBILITY  
IN THE REPUBLIC OF ARMENIA**

*R. Kh. Hakobyan*

The article is devoted to the legislative sources of the constitutional responsibility. The RA laws and other normative legal acts on the Electoral Code, the Judicial Code, the statute of the RA National Assembly, the Constitutional Court, non-government organizations, political parties and funds, the referendum and local referendum, civil and municipal service, the Ombudsman's and Prosecutor's Office, Central Bank and the local self-government are analyzed as legislative sources for the institute of the constitutional responsibility in the Republic of Armenia.

**ԽՈՍՐՈՎ ԵՐՐՈՐԴ ՄԵԾԻ ԵՎ ՏԻՐԻԴԱՏ ԵՐՐՈՐԴ ՄԵԾԻ  
ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ  
(քննությունն իրավաբանական հետազոտման մեթոդի միջոցով)**

**Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*

Մեծ Հայաստանի Խոսրով Մեծ և նրա որդի Տիրիդատ Մեծ թագավորների թագավորման ժամանակի հարցը կարևոր է հայկական պետության և իրավունքի պատմության համար և շրջադարձային՝ հայ ազգի կյանքում: Այդ թագավորների անվան հետ է կապված Մեծ Հայաստանի վերջնական դուրս գալը իրանական միության (Ֆեդերացիայի կամ՝ կոնֆեդերացիայի) կազմից, որը հող ստեղծեց Արևմտյան քաղաքակրթությանը մերձենալու համար: Նրանցից Տիրիդատ Մեծ թագավորը, Գրիգոր Լուսավորչի հետ միասին, կազմակերպել է աշխարհում առաջին քրիստոնեական հեղափոխությունը, հիմնադրել մարդկության պատմության մեջ առաջին քրիստոնեական պետությունը:

Պատմության մեջ առաջին անգամ Մեծ Հայաստանում է, որ քրիստոնեական եկեղեցին և պետությունը իրենց սահմաններով սկսել են համընկնել, իսկ եկեղեց-

ցին դարձել է ոչ միայն լեզուի և լեզու, այլև պետական և համընդհանուր: Այնտեղ է, որ սկիզբ է դրվել քրիստոնեական քաղաքակրթությանը և այնտեղից է սկսվել քրիստոնեության հաղթարշավն աշխարհում: Դրա համար էլ կարևորվում է այս երկու թագավորների թագավորման ժամանակի պարզման և հիմնավորման անհրաժեշտությունը:

Դա անել շատ դժվար է: Հին Հայաստանում կատարված դեպքերի և իրադարձությունների շղթան և դրանց կատարման տրամաբանությունը հեշտ չէ վերականգնել, քանի որ դրանք շատ դեպքերում չեն արձանագրվել, իսկ արձանագրվածը ոչնչացվել է բազմաթիվ այլադավան և այլ ռասայի պատկանող ցեղերի ու ազգերի նվաճողական պատերազմների հետևանքով: Իսկ ամենազլխավորն այն է, որ այդ երկիրը, սկսած մ.թ.ա. վեցերորդ դարից, գտնվելիս է եղել Իրանական պետությունների միության մեջ, ուստի հունական և հռոմեական պատմիչների կողմից այն չի դիտվել որպես առանձին պետական-քաղաքական միավոր, այլ՝ Իրանի մաս, դրա համար էլ նրանց կողմից այնտեղ կատարվող իրադարձություններին առանձին նշանակություն չի տրվել, և դրանք քաղաքական պատմության առարկա չեն դարձվել: Եթե նույնիսկ Հայաստանում կատարված դեպքերը նրանց կողմից հիշատակվում են, ապա միայն հարևանցիորեն և միայն Հռոմի և Իրանի հարաբերությունների կոնտեքստում: Դրանց պատճառը եղել է նաև այդ պատմիչների մեծամտությունը, ատելությունը և նախանձը, մեկ այլ ազգի ևս արժանավոր և պատմության շարժիչ ուժ կամ դրան նպաստող գործոն դիտելու ցանկության բացակայությունը: Դրա համար երրորդ դարի հայ ժողովրդի պատմությունը շատ քիչ չափով է լուսաբանված, այդ թվում նաև՝ Մեծ Հայաստանի թագավորության պատմությունը, որը սխալմամբ և համատարած կերպով նախասովետական և սովետական պատմագրության կողմից ներկայացվում է որպես ամբողջ Հայաստանի և հայ ժողովրդի պատմություն:

Նույնիսկ այնպիսի հարց, ինչպիսին է Մեծ Հայաստանի թագավորների ժամանակագրության հարցը, պատված է խորհրդավորությամբ և տեղի է տվել բազմաթիվ տարակարծությունների: Մինչև այժմ որոշված չէ, թե երրորդ դարում Խոսրով անունով քանի՞ թագավոր է թագավորել<sup>1</sup>: Փորձ չի արվել որոշակիացնել, թե եղե՞լ է արդյոք Խոսրով Առաջինին հաջորդած և Տիրիդատ Երկրորդին նախորդած կամ նրա հետ զուգահեռաբար Մեծ Հայաստանի որևէ մասի վրա թագավորող, Իրանի թագավոր Արտավան Հինգերորդի եղբայրը համարվող, Խոսրով անուն ունեցող ևս մեկ թագավոր: Ըստ որոշ աղբյուրների՝ նման թագավոր եղել է, թագավորել 215/216-237 թվականներին, Մեծ Հայաստանում կամ նրա մի մասում: Հ. Մանանդյանը և ուրիշներ նման թագավորի գոյությունը բացառում են,

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն՝ 8 հատորով, հատոր 2-րդ, Երևան, 1984: **Ազաթանգեղոս**, Հայոց պատմություն, Եհ. հրատ., Երևան, 1983: **Սովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Եր. պետ. համալսարանի հրատ., 1981: **Լեո**, Երկերի ժողովածու, «Հայաստան» հրատ., հ. 1, Երևան, 1966: **Ս. Տ. Երենյան**, Հայաստանը և վերջին Պարթև Արշակունիների պայքարը Հռոմի դեմ, Պատմա-բանասիրական հանդես, №4, 1977: **Ա. Ա. Մարտիրոսյան**, Սասանյանների և Հայաստանի քաղաքական շրջադարձը երրորդ դարում, Պատմա-բանասիրական հանդես, №1, 1979: **Ա. Սարգսյան**, **Ա. Հակոբյան**, Հայոց պատմություն, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1997: **Է. Լ. Դանիելյան**, **Ա. Ա. Մելքոնյան**, Հայոց պատմություն, Երևան, 2008: **Լ. Շահինյան**, Սովսես Խորենացի, պատմություն և ժամանակագրություն, «Լույս», 1989:

իսկ ուրիշները (Գուտշմիտ, Յուստի և այլն)՝ հաստատում<sup>2</sup>: Որոշակիորեն հիմնավորված չէ, թե արդյոք եղե՞լ է Խոսրով Երրորդ թագավոր, և նա՞ է եղել Տիրիդատ Երրորդի հայրը, թե՞ Տիրիդատ Երկրորդը:

«Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության ութհատորյակի հեղինակները Տիրիդատ Երրորդ Մեծ թագավորի հայր Խոսրովին նույնացնում են Խոսրով Առաջինի որդի Տիրիդատ Երկրորդի հետ՝ վերջինիս կոչելով Տիրիդատ-Խոսրով Երկրորդ<sup>3</sup>, իսկ նրանից առաջ Խոսրով Երկրորդի և նրանից հետո առանձին Խոսրով Երրորդ Մեծի գոյությունը հերքվում է: Ենթադրվում է, որ Տիրիդատ Երկրորդ -«Խոսրովը» թագավորել է Մեծ Հայաստանում, այնուհետև՝ դրա Հռոմեական մասում, 216-256 թվականներին, Խոսրով Առաջինից հետո (191-215 կամ 198-215/217), իսկ Խոսրով անունը եղել է այդ Տիրիդատ Երկրորդի ոչ թե անունը, այլ տիտղոսը, պատվանունը, որը նշանակում է «բարեհամբավ, հռչակավոր, անվանի կամ թագավոր»<sup>4</sup>: Սրանից էլ բխեցվում է, որ Տիրիդատ Երրորդ Մեծը եղել է այս Տիրիդատ Երկրորդի որդին, որը պետք է ծնված լինի մինչև 256 թվականը, և որն էլ իբր եղել է վերջինիս ծնողի սպանության և նրան Հռոմ փախցնելու տարեթիվը:

Այնուհետև, ըստ «Հայ ժողովրդի պատմություն» չորսհատորյակի հեղինակների, Հ. Մանանդյանի և այլոց կարծիքների՝ եղել է նաև մեկ այլ Խոսրով, որը թագավորել է 272/273-287 թվականներին, որին էլ նրանք համարում են Տիրիդատ Երրորդ Մեծի ծնողը<sup>5</sup>: Այս կարծիքն ավելի մոտ է ճշմարտությանը, բայց՝ մասամբ: Նրանք հարց չեն տվել, թե 287 թվականին, որը նրանց կարծիքով այդ Խոսրովի սպանության և Տիրիդատի Հռոմ փախցնելու թվականն է, Հռոմ տարված երեխա Տիրիդատը ինչպե՞ս կարող էր 10-13 տարում փայլուն կրթություն ստանալ, մասնակցել հունական օլիմպիական խաղերին, դառնալ չենպիտո, մասնակցել արևմտյան և արևելյան ճակատներում Հռոմի մղած մի քանի պատերազմների և հետո էլ՝ դառնալով Մեծ Հայաստանի թագավոր, 301թ. իրականացնել քրիստոնեական մեծ հեղափոխությունը: Ավելորդ չի լինի նշել, որ այս բոլոր կարծիքները բավարար չափով հիմնավորված չեն, հետևաբար՝ գիտական չեն, և դա հիմնականում եղել է գիտական տեսության և դրա վրա հիմնված մեթոդների բացակայության հետևանք:

Ինչպես տեսնում ենք, երրորդ դարի հայ թագավորների թագավորման ժակետների հարցը պատված է խորհրդավորությամբ և տեղի է տվել բազմաթիվ տարակարծությունների, և դա այն դեպքում, երբ այս ժամանակաշրջանի Մեծ Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների մասին ավելի շատ անդրա-

<sup>2</sup> **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2-րդ, էջ 77: **Լ. Շահինյան**, Սովսես Խորենացի. պատմություն և ժամանակագրություն, «Լույս», 1989:

<sup>3</sup> Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հատոր 2-րդ, էջ 25, 59: **Հ. Մանանդյան**, Երկեր, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, հ. «Բ», էջ 37-77:

<sup>4</sup> Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հատոր 2-րդ, էջ 25, 59:

<sup>5</sup> **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2-րդ, էջ 99: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, «Հայպետուսմանկիրատ», Երևան, 1963, էջ 249: Հայ ժողովրդի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), խմբ. պրոֆ. Մ.Գ.Ներսիսյանի, Երևանի պետ. համալսարանի հրատ., Երևան, 1972, էջ 109-110: **Ա. Սարգսյան**, **Ա. Հակոբյան**, Հայոց պատմություն, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1997:

դարձեր կան հայ և օտար գրավոր աղբյուրներում, քան դրանից առաջ տեղի ունեցած դեպքերի: Անորոշ է մնում նույնիսկ հարցն այն մասին, թե երրորդ դարում քանի՞ հայկական թագավոր է եղել Խոսրով անունով և նրանցից ով և երբ է թագավորել<sup>6</sup>: Այդ ամենը հանգեցնում է նույնիսկ քրիստոնեական մեծ հեղափոխության ժամանակի հարցի վիճարկմանը, որի ռահվիրաները «օբյեկտիվ» երևալու մարմաջով տառապող որոշ հայ պատմաբաններ են, հատկապես՝ Գ. Մանանդյանը:

Այդ հակասական կարծիքների և թյուրիմացությունների պատճառը ոչ միայն պատմական աղբյուրների տղությունն է, այլ նաև այն, որ նշված և այլ հեղինակների ուսումնասիրություններում որևէ նշանակություն չի տրվել տվյալ դարաշրջանի իրավական իրողություններին ու պրոցեսներին, և դրանք չեն կապվել կատարվող հասարակական տեղաշարժերի հետ, չի գիտակցվել դրանց նշանակությունը պատմության ընթացքի համար: Մինչդեռ պետությունների, ժողովուրդների ու քաղաքակրթությունների բախտը, դրանց զարգացման, քայքայման պրոցեսներն ուղղակիորեն կապված են դրանց հիմքում ընկած և գործող իրավական, կրոնական, բարոյական, քաղաքական, տնտեսական և էսթետիկական գաղափարական-կարգավորիչ նորմատիվ համակարգերի մեջ տեղի ունեցող օրինաչափ պրոցեսների հետ, պայմանավորված են, որոշվում և ուղղորդվում են դրանցով: Այդ համակարգերի մեջ գործում է օբյեկտիվ օրենք, որը բացահայտվել և սահմանվել է մեր կողմից<sup>7</sup>: Այդ օրենքի գոյության և գործողության փաստը միաժամանակ հերքումն է մարքիստական հասարակական տնտեսական ֆորմացիաների մասին արատավոր և կեղծ տեսության և մնացած բոլոր այն տեսությունների, որոնցով բացատրվում է հասարակությունների, պետությունների ու իրավական համակարգերի, դրանց հիմքում ընկած ինչ-որ տնտեսական օրինաչափությունների գոյությունն ու գործողությունը կամ բացակայությունը<sup>8</sup>: Դրանցից մեզ հետաքրքրողը հատկապես իրավական համակարգի մեջ տեղի ունեցող օրինաչափ գործընթացներն են, դրանց ու հասարակության մեջ կատարվող տեղաշարժերի կապը: Ահա այդ ֆենոմեններն ու դրանց կապն ուսումնասի-

<sup>6</sup> Գայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հատոր 2-րդ, Երևան, 1984: *Ազարանգեղոս*, Հայոց պատմություն, Եր. պետ. համալսարանի հրատ., Երևան, 1983: *Սովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Եր. պետ. համալսարանի հրատ., 1981: *Լեո*, Երկերի ժողովածու, «Հայաստան» հրատ., հ. 1, Երևան, 1966: *Ս. Տ. Երեմյան*, Հայաստանը և վերջին Պարթև Արշակունիների պայքարը Հռոմի դեմ, Պատմա-բանասիրական հանդես, №4, 1977: *Ա. Ա. Սարտիրոսյան*, Սասանյանների և Հայաստանի քաղաքական շրջադարձը երրորդ դարում, Պատմա-բանասիրական հանդես, №1, 1979: *Ա. Սարգսյան*, *Ա. Հակոբյան*, Հայոց պատմություն, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1997: *Է. Լ. Դանիելյան*, *Ա. Ա. Մելքոնյան*, Հայոց պատմություն, Երևան, 2008: *Լ. Շահինյան*, Մովսես Խորենացի. պատմություն և ժամանակագրություն, «Լույս», 1989:

<sup>7</sup> *Ս. Խաչատրյան*, Իրավունքի օրինաչափությունները, Երևան, 2003: *Ս. Խաչատրյան*, Եզնիկ Կողբացին կամքի ազատության մասին, Երևան, 2003: *Ս. Խաչատրյան*, Իրավունքի էֆեկտիվությունը, Երևան, 2003: *Ա. Ա. Խաչատրյան*, Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը: Երևան, 2010: *С. А. Хачатрян*. Указы Ездигерта Второго и его министра Михрнерсеха об отречении армян от христианства и их аксиологический, юридический, логический и социологический анализ. Ереван, 2009.

<sup>8</sup> *Т. В. Кашанина*. Происхождение государства и права. Изд. «Юрист», М., 1999.

րելու համար էլ առաջադրվել է իրավական կամ իրավաբանական հետազոտման մեթոդը, բայց այն կարող է օգտակար լինել նաև ամեն մի մասնավոր պատմական բնույթի հետազոտության համար: Այս հոդվածի մեջ փորձ է արվում ցույց տալ դրա տեսական և պրակտիկ նշանակությունը, և օգտակարությունը նույնիսկ այնպիսի կոնկետ պատմական փաստեր ու երևույթներ ուսումնասիրելիս, ինչպիսիսներից է վերոնշված թագավորների ժամանակագրությունը: Դրա միջոցով հնարավոր է դառնում բացատրել և երբեմն՝ վերականգնել պատմության ոչ թե խորքերում, այլ նույնիսկ՝ մակերեսին ընկած պատմական դեպքերի անհայտ մնացած կողմերը, դրանց պատճառահետևանքային կապերը, վերականգնել պատճառների ու դեպքերի շարքում պակասող օղակները, վերլուծել պատմական փաստերը, որոնք այլ, այդ թվում նաև՝ պատմահամեմատական, համեմատական, տրամաբանական, նկարագրական և այլ մեթոդներով անել արդյունավետ կամ էլ հնարավոր չէ: Այս մեթոդը ինքնաբերաբար դառնալու է նաև իրավական ապացուցման ամենակարևոր մեթոդն ընդհանրապես:

Երբեմն նույնիսկ այս կամ այն կերպ հայտնի դարձած և կոնվենցիոնալ կարծիքի հիման վրա հաստատագրված պատմական իրադարձությունը այս մեթոդի կիրառման հետևանքով նոր իմաստ է ձեռք բերում:

1. Վերոնշված տեսության և մեթոդի հիման վրա կատարելով այս հետազոտությունը, նախ և առաջ պետք է նշել, որ Խոսրով անունը իսկապես նշանակում է «անվանի, բարեհամբավ», և գուցե Տիրիդատ Երկրորդ թագավորը կրել է նաև «Խոսրով» անունը որպես տիտղոս կամ պատվանուն, բայց դա չի նշանակում, որ դա եղել է Իրանի թագավոր Շապուհ Առաջինի (240/242-272) որդիների անվանակոչման օրինակով, որն իր չորս որդիներին «Խոսրով» պատվանունն է շնորհած եղել<sup>9</sup>: Ապօրինաբար, այն է՝ ապստամբության միջոցով, որը զրադաշտական իրավունքով նախատեսված ամենածանր հանցագործությունն էր, իշխանության եկած և Հայաստանն ավերող Սասանյան թագավորների վարքագծի նմուշները, նրանց անունները և պատվանունները այդ ժամանակ ատելի են եղել Հայաստանում և նրանց սովորություններն ու գործողություններն այնտեղ օրինակելի չէին կարող դառնալ: Դրա հետ միասին, միաժամանակ պետք է նշել, որ երեխաներին բազմաթիվ անուններ տալը զրադաշտական իրավունքով և կրոնով պայմանավորված սովորություն է եղել, որը պատմական փաստ է: Արամազդ աստվածն ուներ 72 անուն<sup>10</sup>: Բազմաթիվ անուններ են ունեցել Միհր, Վահագն և այլ աստվածներ: Արշակունիները, որպես կանոն, կրել են մի քանի անուններ, որոնց թվում պարտադիր է եղել իրենց դինաստիայի հիմնադրի՝ Արշակի անունը: Սասանյանների համար պարտադիր է եղել Սասանյան դինաստիայի հիմնադիր Արտաշիր (Արտաշես) Առաջին թագավորի անունը: Դրա համար վերոնշված հայ թագավորը, բացի Տիրիդատ անունից, կարող էր ունենալ և ունեցել է մի քանի անուն ևս, այդ թվում գուցե նաև՝ Խոսրով անունը, և դա անկախ այն բանից, թե ինչպես են կոչվել Շապուհ Առաջինի որդիները: Բացի դրանից, և Իրանի, և Հայաստանի Արշակունի և Սասանյան թագավորները թագադրման ժամանակ

<sup>9</sup> Հայ ժողովրդի պատմություն՝ 8 հատորով, հատոր 2-րդ, էջ 25:

<sup>10</sup> Авеста в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака. Журнал «Нева», «Летний сад», Санкт Петербург, 1998, с.162-172.

ընդունել են նոր թագավորական անուն կամ հայտարարվել թագավոր մեկ որոշակի անունով: Ժամանակի ընթացքում նրանց շնորհվել են պատվանուններ, որոնցից են նաև «Մեծ», «Բարեհամբավ», «Պերոզ», «Խոսրով» անունները:

Բայց հայտնի չէ, թե Տիրիդատ Երկրորդ թագավորը ունեցել է Խոսրով անուն կամ երբ և ինչի համար է ստացել «Խոսրով» պատվանուն և ումից: Դրա մասին ապացույցներ չկան: Կասիոս Դիոնը նրան անվանում է Տիրիդատ և ոչ թե Խոսրով<sup>11</sup>: Նրան Խոսրով անվանող ժամանակագիր չկա, իսկ ինչ վերաբերում է Ագաթանգեղոսի, Խորենացու, Սեբեոսի և մյուս հայ պատմիչների կողմից Տիրիդատ Երրորդ Մեծի հայր Խոսրովի մասին հիշատակումներին, ապա դրանք այս անձնավորության հետ առնչություն չունեն, այդ անձանց նույնացումը նոր ժամանակների պատմաբանների կողմից կատարվում է ենթադրաբար և անհիմն է: Դրանից ծնվում են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են հարցերն այն մասին, թե Իրանի թագավորներ Խոսրով Առաջին, Խոսրով Երկրորդ և հայկական Խոսրով Առաջին թագավորի անունները նույնպե՞ս պատվանուն են եղել, թե՞ ոչ, իսկ եթե դրանք նույնպես պատվանուններ էին, ապա ի՞նչ է եղել նրանց իսկական անունները, կամ ինչու՞ նրանք պատվանուններ չեն ունեցել:

2. Իրանի արքայից արքա Արտավան Յինգերոդը 208 թվականից սկսած պատերազմ մղելիս է եղել Պարսկաստանի գահը զավթած և օրեցօր հզորացող Արտաշիր Սասանյանի դեմ: Այդ պատերազմն ահագնացել ու սպառնալից է դարձել 215-216 թվականներին: Միաժամանակ նա պատերազմել է իր հարազատ եղբայր, զուգահեռաբար իր հետ Իրանում թագավորող Վաղարշ Յինգերոդի, ինչպես նաև հռոմեացիների դեմ: Հայոց թագավոր Խոսրով Առաջինը, առերես չեզոքություն պահպանելով, եղել է Արտավան Յինգերոդի կողմնակիցը: 215/216 թվականին հռոմեական կայսր Կարակալլան վերջինիս Անտիոք է հրավիրել և բանտարկել: Հայերը նրա դեմ պատերազմ են սկսել այդ ուխտադրության համար, որը ավետական իրավունքով նախատեսված ամենածանր հանցագործություններից մեկն է՝ ծանր պարտության մատնելով հռոմեական զորքերին: 217 թվականին այս անարժան կայսրը մահացել է և նրան հաջորդած կայսր Օփիլիոս Մակրինոսը (217-218)՝ զղջալով իր նախորդի կատարած ստոր արարքի համար, Մեծ Հայաստանի թագավոր է ճանաչել բանտում մահացած Խոսրով Առաջինի որդուն՝ Տիրիդատ Երկրորդին՝ նրան ուղարկելով ոսկե թագ: Այս մասին պատմում է Դիոն Կասիոսը, այս թագավորին կոչելով Տիրիդատ և ոչ թե Խոսրով, և նրա այս տեղեկությունը կասկածի ենթարկելու հիմքեր չկան:

Կա նաև մեկ այլ պատմական տեղեկություն, որի ճշտության մեջ համոզված են եղել Գուտշմիտը, Յուստին և ուրիշներ<sup>12</sup>: Պրոկոպիոս Կեսարացին հաղորդում է, որ այդ նույն ժամանակ Իրանի թագավոր Արտավան Յինգերոդը Մեծ Հայաստանի թագավոր է նշանակել իր եղբորը՝ Արշակին: Ենթադրվում է, որ նա այնտեղ թագավորել է շուրջ քսան տարի: Պ. Կեսարացու գրքի համապատասխան հատվածը իր գրքում մեջբերում և այդպիսի նշանակումն անհնար է համարում Հ. Մանանդյանը<sup>13</sup> և՛ իզուր: Արշակ անունը կրել են, ինչպես արդեն ասվել է, բոլոր Ար-

<sup>11</sup> **Հ. Մանանդյան**, Երկեր, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, հ. «Բ», էջ 65:

<sup>12</sup> Հայ ժողովրդի պատմություն՝ 8 հատորով, հատոր 2-րդ, Երևան 1984:

<sup>13</sup> **Հ. Մանանդյան**, Բնական տեսության հայ ժողովրդի պատմության, հ. 2-րդ, էջ 78:

շակունիները, պարտադիր կերպով<sup>14</sup> և բացառված չէ, որ նա թագադրվելիս ընդունած լինի թագավորական անուն, որը կարող էր լինել Խոսրով՝ ի հարգանք նախկին թագավորի հիշատակի: Ձեռնադրության ժամանակ նոր անուն ընդունելու սովորությունը մինչև հիմա պահպանվել է հայկական հոգևորականության մեջ: Բացառված չէ նաև, որ նրանք՝ Խոսրով Երկրորդը և Տիրիդատ Երկրորդը տարբեր անձինք են և թագավորել են միաժամանակ, Մեծ Հայաստանի տարբեր մասերում, ինչպես եղել է նրանց ժամանակակից Իրանում, որտեղ միաժամանակ թագավորել են Արտավան Հինգերորդն ու նրա եղբայր Վաղարշ Հինգերորդը:

3. Խոսրովին որպես Արտաշիր Առաջինի ժամանակակցի հիշատակում է Սեբեոսը: Ըստ նրա՝ այս թագավորը թագավորել է 31 տարի<sup>15</sup>, որը իրականում Խոսրով Առաջինի և Երկրորդի թագավորման հանրագումարն է: Սա միաժամանակ նշանակում է, որ Արտաշիր Առաջինի թագավորման ժամանակ եղել են նրան ժամանակակից և Խոսրով, և Տիրիդատ անունով թագավորներ, և անկասկած է, որ Խոսրով Երկրորդ թագավորը թագավորել է 215/216-237թթ. և եղել Սասանյանների անհաշտ թշնամին:

4. Հարցը նաև նրանում է, որ Իրանի արքայից արքա Արտավան Հինգերորդը և նրա արքունիքը չէր կարող Հայաստանի շուրջ և այնտեղ կատարվող պրոցեսների անտարբեր դիտորդ մնալ և չմիջամտել, քանի որ Մեծ Հայաստանի թագավորի թագադրման հարցը ներպետական, ներիրանական իրավական, և ոչ միայն զուտ քաղաքական հարց է եղել: Մեծ Հայաստանի թագավորի և ընդհանրապես՝ Իրանի մաս հանդիսացող պետություններից ամեն մեկի թագավորի կամ սատրապի թեկնածու առաջադրելու իրավունք ունեին և դա անում էին Իրանի արքայից արքային կից մագերի և ազգականների խորհուրդները, որոնց թ. Մոմզենը կոչում է սենատ, «որը թագավորներ էր դնում»<sup>16</sup>: 64թ. իրանա-հռոմեական պայմանագրի ուժով դրան կարող էին համաձայնել կամ չհամաձայնել հռոմեական իշխանությունները: Այդ սենատը Արշակունիների արքայատոհմից ընտրում և նշանակում էր արքայից արքային, սովորաբար՝ ոչ թե թագավորի որդուն, այլ թագավորական տոհմից լավագույնին, իսկ Իրանի սուբյեկտ հանդիսացող պետությունների համար նրանց առաջադրած թագավոր-թեկնածուին նշանակում էր արքայից արքան: Նման դեպքում այդ խորհրդում, որը միաժամանակ դատարան էր, և որի միստերից մեկն էլ նկարագրել է Ազաթանգեղոսը, քննարկման առարկա էր դառնում տվյալ թեկնածուի ամբողջ բնութագիրը, նրա «մտքերը, ասած խոսքերն ու կատարած գործերը», ինչպես նաև նրա առողջական վիճակը, տարիքը: Դա կատարվում էր այն նույն կարգով, ինչպես որ աստվածների կողմից կատարվում էր մահացածների հոգիների դատը Չինվադ բաժանարար կամրջի մոտ<sup>17</sup>: Նրանք ոչ միայն իրավունք ունեին, այլև նույնիսկ պարտավոր էին

<sup>14</sup> **Прокопий Кесарийский**. О персидской войне. Из серии: Византийские источники, т. 1, изд. АН Арм. ССР, Ереван, 1967.

<sup>15</sup> **Себеос**. История императора Иракла. Пер. с арм. К. Патканяна, СПб., 1862, с. 22.

<sup>16</sup> **Теодор Моммзен**. История Рима. Том 4, изд. «Феникс», Ростов на Дону, 1997, с. 255.

<sup>17</sup> Արտա Վիրապ նամակ: **Յուշտի Ֆրիան**, Պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյանը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1958:

Մեծ Հայաստանի թագավոր նշանակել և դա անկախ այն հանգամանքից, թե դա ինչ և ինչքան քաղաքական կարևորություն ուներ այդ ժամանակ: Եվ իհարկե, նման կարևոր պաշտոնը այդ բախտորոշ ժամանակ կարող էր վստահվել Արտավանի եղբորը և ոչ թե մեկ այլ, այն էլ՝ ոչ բարեհույս անձի:

5. Այս ամենի լույսի տակ հատուկ կարևորություն է ձեռք բերում Դիոն Կասինոսի այն հաղորդումը, ըստ որի Խոսրով Առաջինի տղաները «վիճի մեջ էին իրենց հոր հետ»: Իսկ որ Խոսրով Առաջինի և նրա որդիների միջև վեճը եղել է շատ հիմնավոր և լուրջ, պետք է կասկածել, որ հարցը եղել է քաղաքական կողմնորոշման հարց և իրականում նրանց հաշտեցնելու պատրվակով Անտիոք հրավիրած հռոմեական կայսր Կարակալլան ի սկզբանե նպատակ է ունեցել ձերբակալել իրանամետ թագավորին, որի արդյունքում էլ վեճինս մահացել է: Ծնողին չհարգելը, նրան չլսելը և նրա հետ վիճելը ըստ զրադաշտական իրավունքի (այնուհետև նաև՝ ըստ հայկական քրիստոնեական իրավունքի) համարվել է ծանր հանցագործություն և կոչվել անբարշտություն: Հասկանալի է, որ շատ ավելի վտանգավոր է դրա այն տեսակը, որը հանգեցրել է ծանր հետևանքների, ինչպիսին կարելի է դիտել թագավորական ծնողին բանտարկության և մահվան հասցնելը: Ավեստայի «Քարոզ հարցերի ձևով» զաթայում Ջորոաստրը հարցնում է Արամազդին. «Ո՞վ է սովորեցրել որդուն հարգել հորը»<sup>18</sup>: «Գանձ Շահեկանում» ասված է. «Ո՞վ դառնացող յոյժ: Այր ահարկու, դժմբեր եւ որդի ծնողատանջ յոյժ»<sup>19</sup>: Նման արարքներ գործած անձինք մեխանիկորեն դիտվել են դիվական հոգիներ, զրկվել ազատությունից, առանձին դեպքերում նաև՝ կյանքից, իսկ գահի հավակնելու մասին խոսելն իսկ ավելորդ է, նամանավանդ, որ իրանական արքունիքում եղել են Մեծ Հայաստանում թագավորելու շատ ավելի արժանավոր թեկնածուներ: Դա նշանակում է, որ Տիրիդատ Երկրորդը թագավորել է Մեծ Հայաստանի մի որևէ մասում, թագավոր նշանակվելով Մակրինոսի կողմից և թագավորել անօրինական կարգով, իսկ ծնողի հետ վիճած մարդը չէր կարող կրել իր կողմից դավաճանած ծնողի անունը որպես պատվանուն: Դա միայն նրա կամքից չէր կախված: Դա էլ իր հերթին նշանակում է, որ այդ երկիրը երրորդ դարում Իրանի և Հռոմի միջև պայմանագրային կարգով բաժանված է եղել ոչ թե երկու անգամ՝ 244 և 276 թվականներին, այլ նաև 215/216 թթ. և այնտեղ այդ ժամանակից սկսած էլ եղել է երկու թագավոր՝ Խոսրով Երկրորդը, որը Արտավան Հինգերորդի եղբայրն է, և Խոսրով Առաջինի որդի Տիրիդատ Երկրորդը: Արտավան Հինգերորդը 215/216թթ. կարող էր գնալ Մեծ Հայաստանի բաժանմանը՝ երեք ճակատներում չպատերազմելու համար:

6. Հաջորդ ապացույցն այն մասին, որ Տիրիդատ Երկրորդին զուգահեռ, Մեծ Հայաստանի հիմնական մասում մինչև 237թ. թագավորել է Խոսրով Երկրորդ անունով թագավոր, հետևյալն է: Արտաշիր Առաջին Սասանյանը (224-238/242), որն իշխանության էր եկել Իրանը կենտրոնացնելու և Աքեմենյանների կայսրությունը վերականգնելու կոչերով ու հավակնություններով, անմիջապես փորձեր է

<sup>18</sup> Авеста в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака. Журнал «Нева», «Летний сад», Санкт Петербург, 1998, с. 135-136.

<sup>19</sup> Գանձ Շահեկան, սինխրոն թարգմանությունը և ծանոթագրությունները Յ. Թիրեաքյանի, «Հանդես Ամսորեայ», Վիեննա, 1955, էջ 202, կ. 79:



ծեռնարկել Մեծ Հայաստանը զավթելու ուղղությամբ: Նա համառորեն հարձակվել է Մեծ Հայաստանի վրա 228, 230-234, այնուհետև՝ 237 թվականներին, բայց այդ պատերազմը 11 տարի տևող ժամանակահատված չի ունեցել: Դրանում հայերը և հաղթել են, և պարտվել (և ոչ թե միայն հաղթել): Այդպիսին են պատմական վկայությունները: Դրությունը կտրուկ փոխվել է 237 թվականին, երբ Խոսրով Երկրորդը մահացել է, որից հետո էլ Մեծ Հայաստանը գրավվել է Արտաշիրի և նրա որդի Շապուհ Առաջինի կողմից: 253թ. նույն Շապուհ Առաջինը գրավել է Մեծ Հայաստանի մյուս՝ հռոմեական մասը (մասերը) և ամբողջ Մեծ Հայաստանի թագավոր նշանակել (իհարկե՝ «սենատի» որոշմամբ) իր որդի Որմիզդ-Արտաշիրին: Դրանից հետո Տիրիդատ Երկրորդը փախել է Փոքր Հայաստան, որն արդեն շուրջ երկու հարյուր տարի հռոմեական պրովինցիա էր, արքունիքով հաստատվել Չրմես (Ծումինա) ավանում: Այնտեղ էլ երեք-չորս տարի ապրելուց հետո նա մահացել է իր մահով, առանց որևէ կողմնակի միջամտությունների և որևէ մեծագործություն կատարելու, ոչինչ չանելով «Մեծի» տիտղոս վաստակելու համար:

Հաջորդ հարցը, որ կարոտ է պարզաբանման և որի հետազոտությունը հնարավոր և ճիշտ է իրականացնել նորից այս նոր մեթոդի միջոցով, Խոսրով Երկրորդ Մեծ (և ոչ թե Խոսրով Երկրորդ) թագավորի գոյության ու թագավորման հարցն է:

1. Այս թագավորի գահակալման ժամկետների կապակցությամբ պետք է անմիջապես նշել, որ նա չի թագավորել ոչ 253 թվականից և ոչ էլ 272-ից մինչև 287թթ. ընկած ժամանակաշրջանում: 253 թվականից առաջ և երևի՝ 237-244թթ. նվաճումներից հետո Թ. Պոլլիոնի կողմից որպես Մեծ Հայաստանի կամ դրա մեծ մասի թագավոր է հիշատակվում Արավազդ անունով մեկը<sup>20</sup>, և դա երևի Հայաստանի այն մասի վրա, որը կցվել էր Իրանին Շապուհ Առաջինի և Ֆիլիպ Արաբի միջև կնքված 244թթ. պայմանագրով, իսկ 253թ. հետո ամբողջ Մեծ Հայաստանում թագավորել է Շապուհ Առաջինի որդի Որմիզդ-Արտաշիրը, որը եղել է նաև Իրանի Արևմտյան մասի կուսակալը: Դրանց մասին հավաստի տեղեկություններ կան: Հավաստի է նաև, որ Որմիզդ-Արտաշիրը 272թ. դարձել է ամբողջ Իրանի թագավոր, և նրա կողմից Մեծ Հայաստանի թագավոր է նշանակվել նրա որդի Որմզդակը, որն այնտեղ թագավորել է երեք տարի, և ընդհանրապես, մինչև Տիրիդատ Երկրորդի թագավորելը որևէ հաղթական հայ թագավորի, նրա կամ հռոմեական զորքերի կողմից Իրանի նկատմամբ տարած հաղթանակների մասին տեղեկություններ այս ժամանակամիջոցում չեն գրանցվել: Բացի դրանից, Խոսրով Երկրորդը չէր կարող սպանված լինել 287թ., քանի որ եթե այդ թվականին մանկահասակ Տիրիդատ Երկրորդը<sup>21</sup> հռոմ տարվեր, ապա 12-13 տարում, չէր կարող հասցնել այնտեղ լավագույն կրթություն ստանալ, դառնալ հունական օլիմպիական խաղերի չեմպիոն, մասնակցել Արևմուտքում և Արևելքում հռոմեական պետության մղած բազմաթիվ պատերազմներին, իսկ հետո էլ՝ լինելով դեռևս անչափահաս, թագադրվել Մեծ Հայաստանի թագավոր, Գրիգոր Լուսավորչի հետ (որը նույնպես այդ ժամանակ պետք է անչափահաս եղած լիներ) միասին

<sup>20</sup> **Трибеллий Поллион.** Тридцать тиранов. Из кн.: Властители Рима. Пер. С. П. Кондратьева, под ред. А. И. Доватора. «Наука», М., 1992.

<sup>21</sup> Ըստ որոշ աղբյուրների՝ «ոչ այնքան փոքրահասակ»: Այդ մասին տես՝ **Ս. Տեր-Ղևոնդյան,** Ազգաբանագիտի նոր արաբական խմբագրությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1968, էջ 73:

ղեկավարել 298-301թթ. քրիստոնեական հեղափոխությունը:

2. Խոսրով Երկրորդի և Արտաշիր Առաջինի միջև պատերազմը ընթացել է Մեծ Հայաստանի և Ատրպատականի (Մարաստանի) տարածքներում, իսկ Որմիզդ-Արտաշիրի, նրա հայր Շապուհ Առաջինի և Խոսրով Մեծի միջև պատերազմը տեղի է ունեցել Սիջազետքում և բուն Պարսկաստանում:

3. Խոսրով Երրորդ Մեծ թագավորի և Պալմիրայի (Թադմոր) թագավոր Օդենատոսի (261-268) գահակալության ժամկետների հետ է համընկնում հռոմեական պետության և հայերի վճռական պատերազմական հաջողություններն Արևելքում: 261 թվականին Հռոմի կայսր Գալլենոս Պուբլիոս Լիցինիոս Վալերիանոս Իզմատիոսը (253-268), որին Խորենացին Լիկիանիոս Գաղղիանոս է անվանում, և որը եղել է պարսիկների մոտ գերի ընկած և Շապուհ Առաջինի կողմից տանջամահ արված կայսր Վալերիանոսի որդին, Պալմիրայի տիրակալ Սեպտիմիոս Օդենատոսին ճանաչել է «Պալմիրայի թագավոր», նրան տվել «Վերականգնող Արևելքի» տիտղոսը և նշանակել կայսրության արևելյան զորքերի գլխավոր հրամանատար: Օդենատոսը, որը մինչ այդ էլ, զորակցելով հայկական ուժերի հետ, պատերազմ է մղել Իրանի դեմ, շարունակել է պատերազմը, որի ժամանակ էլ պարսկական ճակատում գրանցվել են մի շարք հաջողություններ: Ազատագրվել են Եդեսիան, Սծբինը, Խառանը, գրավվել Տիգրանը և ամբողջ հայկական և իրանական Սիջազետքը: Թ. Մոմզենը այդ առթիվ նշում է, որ «Ամենայն հավանականությամբ, այդ ժամանակ (264թ.) Հռոմին է վերադարձվել (Օդենատոսի կողմից – Ս. Խ.) նաև Հայաստանը»<sup>22</sup>: Եթե Թ. Մոմզենն ավելի ուշադիր լիներ հայկական աղբյուրների նկատմամբ, ապա նա հավաստի կիմանար, որ այդ ժամանակ Մեծ Հայաստանն իսկապես ազատագրվել է, և դա ոչ թե Օդենատոսի, այլ նրա զորակցությամբ կռվող հայերի կողմից: Գլխավոր կռվող ուժերը այդ պատերազմում եղել են հայկական: Պալմիրան եղել է փոքր, խառը բնակչություն ունեցող քաղաք, նրա ուժերը՝ աննշան, իսկ հռոմեացիները տարածաշրջանում մեծ բանակ չեն ունեցել և չէին կարող ունենալ, քանի որ այդ ժամանակ ծանր գահակալական կռիվներ էին տեղի ունենում բուն հռոմեական պետության կենտրոնում և նույնքան ծանր պատերազմ՝ նրա արևմտյան սահմաններում: Ազաթանգեղոսի և Ս. Խորենացու նկարագրություններից պարզ է դառնում, որ իսկապես հայկական զորքերի և նրանց հրամանատար Խոսրով Երրորդ Մեծի դերն այդ պատերազմի ելքի համար վճռական է եղել: Ըստ նրանց՝ այս Խոսրով թագավորը 11 տարի տևող ամենամյա հաղթական արշավանքներ է կատարել Իրանի դեմ: Ըստ հռոմեական աղբյուրների՝ նույնպես Իրանի դեմ մղվող պատերազմի հաղթական հատվածը տևել է շուրջ 11 տարի և ավարտվել այս թագավորի և Օդենատոսի մահով, որը նաև համընկնում է հայոց թագավորի գահակալման ժամկետների հետ: Պատերազմի այդպիսի միանվագ տևողություն չի գրանցվել Արտաշիր առաջինի դեմ մղված պատերազմի ժամանակ:

4. Խոսրով Երրորդ Մեծի սպանության կազմակերպման դավադրական պլանի մշակման պրոցեսը Իրանի ատյանում ճշգրտորեն վերարտադրել է Ազաթանգեղոսը<sup>23</sup>: Արտաշիրը ատյանի նիստին ներկայացել է վախեցած, խուճապահար: Ատյանում հանդես գալով ճառով՝ նա հայտնել է, որ Իրանը ջախջախված է, մա-

<sup>22</sup> **Теодор Моммзен.** История Рима. Том 4, изд. «Феникс», Ростов на Дону, 1997, с. 335.

<sup>23</sup> **Ազաթանգեղոս,** Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 25-33:

սամբ՝ նվաճված և մահացու վտանգի մեջ, որը լիակատարորեն համապատասխանում է նաև հռոմեական պատմիչների նկարագրած պատմական իրադրությանը: Նա ատյանին առաջարկել է միջոցներ գտնել հայոց թագավորին չեզոքացնելու և այդպիսով Իրանը փրկելու համար, նման միջոց գտնողին խոստանալով իր թագավորության կեսը, «պատիվներ» և երկրորդ գահ: Պատմագրության մեջ նման առաջարկը համարվել է հեքիաթային, Ագաթանգեղոսի կողմից թույլ տրված բանաստեղծական չափազանցություն, այնինչ նրա գրածը միանշանակ, ինչպես ասվեց, համապատասխանում է պատմական ճշմարտությանը: Այդ առաջարկն անողը եղել է Որմիզդ-Արտաշիրը, և այն արվել է ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում, Իրանը կործանումից փրկելու համար, որպիսի իրադրություն Արտաշիր Առաջինի ժամանակ չի եղել, իսկ վերջինս նման առաջարկ չէր անի: Բացի դրանից, այդ ժամանակ Որմիզդ-Արտաշիրը փաստացի հանդիսացել է Իրանի արևմտյան կողմի կուսակալը և Մեծ Հայաստանի թագավորը, և նրա այդ խոստումները վերաբերում են Հայաստանին և ոչ թե Իրանին: Մեծ Հայաստանում էլ կար երկրորդ աթոռ, դա Մարաստանի գահն էր:

Խորհրդին (Ատյան) մասնակցող հայոց թագավորի ազգական Անակը համաձայնել է նրան սպանել, եթե Արտաշիրը կատարի իր տված խոստումները՝ դադարեցնելով Արշակունիների հետապնդումները: Ստանալով համապատասխան երաշխիքներ՝ նա մեկնել է Հայոց թագավորի արքունիքի և զորքի ծնեռոց՝ ստեղծելով, կեղծավորելով և խորամանկելով, որոնք զրադաշտական իրավունքի նորմերով համարվում են ծանրագույն հանցագործություններ, շահել հայոց թագավորի վստահությունը և Վաղարշապատ մայրաքաղաքում դավադրաբար սպանել նրան: Ընդ որում, դա տեղի է ունեցել 268թ. գարնանը, երբ թագավորն արդեն զորահավաք է հայտարարած եղել՝ նորից Իրան արշավելու համար:

5. Ըստ հայկական աղբյուրների՝ Անակը հայոց թագավորին սպանել է նրա մոտ գտնվելու երրորդ տարում, գարնանը, Վաղարշապատ մայրաքաղաքի պալատում, երբ վերջինս զորք կազմելիս է եղել նորից Իրան արշավելու համար: Նա սպանությունը կատարել է՝ հանկարծ «հիշելով» Արտաշիրին տված իր խոստումը: Այդ խոսքերը պատահական չեն և նշանակում են, որ Օդենատոսի սպանությունից հետո, որը տեղի է ունեցել այդ դեպքից երկու-երեք ամիս առաջ, դավադրության կազմակերպիչները նրան հիշեցրել են վերցրած պարտավորության մասին և շտապեցրել՝ նոր արշավանքը կանխելու համար: Այդ քայլին դիմելու ազդանշան Անակի համար կարող է ծառայած լինել նաև Օդենատոսի սպանության լուրը: Բոլոր դեպքերում սպանությունն իրականացվել է հապճեպ, Անակի ու նրա ընտանիքի համար ոչ բարենպաստ պայմաններում, նա չի հասցրել փախուստի ապահով ուղիներ նախապատրաստել, որի հետևանքով նրա ամբողջ ընտանիքը, բացի Ս. Գրիգորից ու նրա եղբորից, կոտորվել է: Դրան պետք է ավելացնել, որ թագավորը սպանվել է խաղաղ պայմաններում, Վաղարշապատում, որտեղ, նամանավանդ՝ 253թ. հետո, Տիրիդատ Երկրորդ-«Խոսրովը» պարզապես գտնվել չէր կարող:

6. Օդենատոսի և Խոսրով Մեծի սպանությունները համընկնում են ժամանակի մեջ և բխում այդ ժամանակահատվածում Հռոմի և Իրանի միջև ստեղծված իրադրության տրամաբանությունից: Դա խոսում է այն մասին, որ նրանք եղել են նույն պլանով նախատեսված դավադրության զոհ կամ էլ դրանք կազմակերպվել

են նույն կենտրոնի կողմից: Նրանք երկուսն էլ սպանվել են այն ժամանակ, երբ Իրանի դեմ պատերազմում հայերի և հռոմեացիների օգտին վճռական բեկում է տեղի ունեցած եղել, իսկ դրա «մեղավորները» հիմնականում եղել են այս տիրակալները: Նրանց սպանությունը կարող էր և իրականում բեկում է մտցրել պատերազմի ընթացքի մեջ՝ Իրանին փրկելով վերջնական ջախջախումից: Եվ նրանց դերը այդ պատերազմում լավագույնս գիտակցել են սպանությունը պլանավորող իրանական իշխանությունները, եթե նկատի ունենանք նաև, որ ինքը՝ Գալլենոս կայսրը, այս ճակատն անձամբ չի ղեկավարել երբեք:

7. Օդենատոսն սպանվել է 267թ., Սիրիայում գտնվող Էմեսիա (այժմ՝ Մյասա) քաղաքում, իր հորեղբորորդի Մեոնիոսի կողմից, որոնք անվիճելի փաստեր են, բայց հիշատակում չկա, թե տարվա որ եղանակին կամ ամսին է նա զոհվել: Այդ առթիվ պետք է ասել, որ Էմեսիան Օդենատոսի և հռոմեական զորքերի ծնեռոցն է եղել, ճակատային զծից շատ հեռու և նրա այնտեղ գտնվելն արդեն իսկ խոսում է այն մասին, որ նա վերադարձած է եղել ճակատից այնտեղ ծնեռելու համար և սպանվել է այդ տարվա աշնանը կամ ձմռանը: Նման հետևություն է արվում հետևյալ նախադրյալների հիման վրա: Հայերը, ինչպես պարսիկները, կանոնավոր մշտական բանակ այդ ժամանակ չեն ունեցել: Արշավանքներից հետո ամեն աշուն թագավորական-նախարարական բանակի զինվորները, բացի թիկնապահ զնդերից, ցրվել են տները, մինչև հաջորդ զորակոչման առիթը<sup>24</sup>, իսկ Օդենատոսը (հռոմեացիները) բավարար ուժեր չի ունեցել և առանց հայերի աջակցության ծնեռները չէր կարող պատերազմը շարունակել: Բացի դրանից, 233թ. ձմռանը Հայաստանի լեռներում Ալեքսանդր Սևերոսի բանակի ցրտահարվելուց հետո հռոմեացիները նույնպես ծնեռները դադարել էին պատերազմել: Դրա համար էլ Օդենատոսը կարող էր Էմեսիայում լինել և այնտեղ սպանվել միայն 267թ. խոր աշնանը կամ ձմռանը:

8. Նրա կին Ջենոբիան, որը ամուսնուց հետո թագավորել է Պալմիրայում, իրեն հռչակել է Ասիայի թագուհի և Իրանի օգնությամբ պատերազմ սկսել Հռոմի դեմ: Իսկ դա նույնպես ապացույց է այն բանի, որ Իրանի իշխանությունները մասնակից են եղել Օդենատոսի սպանությանը և, ինչպես խոստացել էին, ճանաչել են նրա իշխանությունը:

9. Երկու թագավորների սպանության պատճառները, նպատակները, կատարման «ծեռագիրը» նույնն են: Դրանք երկուսն էլ իրականացվել են այս տիրակալների ազգականների ձեռքով, քանի որ սովորական մարդասպանը նրանց չէր կարող մոտենալ: Նրանք եղել են կաշառված, նրանց խոստացված է եղել թագավորություն և «պատիվներ»: Պետք է ասել, որ պարսիկները կատարել են տված խոստումները: Ջենոբիան նրանց կողմից ճանաչվել է ամբողջ Փոքր Ասիայի կայսրուհի: Թագավորություն են ստացել նաև Անակի ազգականները, մասնավորապես՝ Գրիգորի եղբայրը<sup>25</sup>: Բացառված չէ, որ Մեոնիոսն էլ զանազան խոստումներ ստացած լինի Ջենոբիայի և իրանցիների կողմից, բայց երկու դեպքում

<sup>24</sup> **Т. Моммзен.** История Рима. Том 4, изд. «Феникс», Ростов на Дону, 1997, с. 257, 335, 337: **Ազաթանգեղոս**, նույն տեղը, էջ 31:

<sup>25</sup> **Հովհան Մամիկոնյան**, Տարոնի պատմություն, Երևան, «Խորհրդային գրող», 1989, էջ 32-33:

էլ այս սպանութիւններն ունեն պետաիրավական և ոչ միայն նյութական կամ այլ պատճառներ ու դրդումներ:

10. Որ Ագաթանգեղոսի երկուն պատմվում է Խոսրով Երրորդ Մեծի կողմից Որմիզ-Արտաշիր թագավորի դեմ Խոսրով Երրորդ թագավորի մղած պատերազմի և նրա եղբրական սպանութեան մասին, ապացուցվում է նաև նրա այն վկայութեամբ, որ պարսիկների դեմ մղած պատերազմի ժամանակ այս Յայոց թագավորին օգնութեան է եկել տաճկաց (արաբների) զորքը<sup>26</sup>: Սա նշանակում է, որ իսկապես Խոսրով Մեծ թագավորը կռվել է արաբների (պալմիրացիների) հետ զորակցած, որոնց հրամանատարն է եղել ազգութեամբ արաբ Օղենատոսը: Այդ փաստը հիմնավորվում է նաև Թ. Մոմզենի բերած որոշ տվյալներով<sup>27</sup>: Այլ արաբական ուժեր այդ տարածաշրջանում չեն գործել պարսիկների դեմ ամբողջ երրորդ դարի ընթացքում, և նման այլ վկայություն, որ արաբները երբևիցէ աջակցած լինեն հայերին պարսիկների դեմ մղված պատերազմում, բացի այս մեկից, չկա:

11. Խոսրով Երրորդ Մեծի (որը «Մեծ» տիտղոսը ստացել է արժանիորեն, իր տարած հաղթանակների շնորհիվ) սպանութունից հետո Մեծ Յայաստանում հայկական օրինական թագավոր չի իշխել, դրա համար էլ Մ. Խորենացին այդ շրջանը կոչել է խառնակ տարիներ: Որ Խոսրով Երկրորդ թագավորը թագավորել է 256/257թ. մինչև 268թ., իսկ նրա որդի Տիրիդատ Երրորդը բավականին ուշ՝ սկսած 282թ., հիմնավորվում է նաև Մ. Խորենացու ներկայացրած հռոմեական կայսրերի հետևյալ ժամանակագրութեամբ, որն աչքի է ընկնում հազվագյուտ ճշգրտութեամբ: Ըստ դրա՝ պարզվում է, որ Խոսրով Մեծի սպանութունից հետո հայոց նախարարները, փրկելով և Յոն տեղափոխելով թագաժառանգ Տիրիդատին և շարունակելով պատերազմը Իրանի դեմ, օգնութեան են կանչել հռոմեական զորքերը և կատարվածի մասին «իսկույն իմաց տվել Վաղերիանոս կայսրին», բայց վերջինս, կռվելիս լինելով գոթերի դեմ, հանելուկային պայմաններում մահացել (սպանվել) է և չի կարողացել հայերին օգնություն ուղարկել: Յայկական պատմագրութեան մեջ այս Վաղերիանոսին շփոթել են Եղեսիայի մոտ գերի ընկած և պարսիկների կողմից սպանված կայսր Վաղերիանոսի (Պուբլիոս Լիցինիոս Վաղերիանոս – 253-259թ.թ.) հետ: Մինչդեռ այս դեպքում Խորենացու գրքում խոսքը այդ կայսրի որդու՝ Օղենատոսին Արևելքի կայսր և հրամանատար նշանակող, վերոնշված Գալլենոս Պուբլիոս Լիցինիոս (Լիկինիոս) Վաղերիանոս Իզմատիոսի (253-268) մասին է, որն էլ չի հասցրել հայերին ժամանակին օգնել, քանի որ, ինչպես պարզվում է Մ. Խորենացու այս վկայութունից, Դանուբ գետի ափերին կռվելիս է եղել Գոթերի դեմ և մահացել է նույն տարում (268թ.)<sup>28</sup>, ինչ որ հայոց թագավորը: Այս կայսրն իսկապես այդ տարում կռվելիս է եղել Դանուբ գետն անցած գոթերի դեմ, սպանվել է այդ նույն տարում, բայց ոչ թե Դանուբի ափին, այլ մեկ ուրիշ վայրում՝ Իտալիայի հյուսիսում տեղի ունեցող գահակալական կռիվներում:

12. Այդ կայսրը չի զոհվել կռվում, այլ իր զորքի ճամբարում, նույնպես հանգստի ժամանակ և նույնպես՝ դավադրութեան հետևանքով, որի հանգամանքները և

<sup>26</sup> **Ագաթանգեղոս**, նույն տեղը, էջ 28 (29):

<sup>27</sup> **Т. Момзен**. История Рима. Том 4, «Феникс», Ростов на Дону, 1997, с. 257, 335, 337:

<sup>28</sup> **Մովսես Խորենացի**, Յայոց պատմություն, ԵՊՀ հրատ., 1981, էջ 260-261:

նույնիսկ կատարողի անունը այդպես էլ չի պարզվել: Նրա մահվան տարեթիվը հռոմեական պատմագրության մեջ հանրահայտ է և չի վիճարկվում: Դա 268 թվականն է<sup>29</sup>: Այսպիսով, Խոսրով Երրորդ Մեծի կյանքի վերջին տարին համընկնում է հենց այս Գաղիանոս Վաղերիանոսի կյանքի վերջին տարվա հետ, և սա նույնպես անհերքելի ապացույց է այն բանի, որ Խոսրով Մեծի մահվան տարեթիվը եղել է 268 թվականը: Դա էլ, հետևաբար, Տիրիդատ Երրորդ Մեծին շոն տանելու տարեթիվն է: Միաժամանակ այդ փաստը խոսում է այն մասին, որ այս կայսրը նույնպես կարող է դարձած լինել Յոթնի գահի որևէ հավակնորդի զոհ, որը կապ է ունեցել Իրանի արքունիքի հետ, և որին պարսիկները դրդել է են ապստամբության՝ թագավորություն խոստանալով:

13. Ըստ Խորենացու նույն այդ ժամանակագրության՝ հռոմեական գահի վրա այս Վալերիանոսից (Վաղերիանոսից) հետո՝ «արագ-արագ իրար հաջորդելով», թագավորել են Կլավդիոս Երկրորդը (Մարկոս Ավրելիոս Վալերիոս Կլավդիոս Երկրորդ - 268-270), Ավրելիանոսը (Կվինտիլոս Մարկոս Ավրելիանոս Կլավդիոս, որը 270թ. դարձավ կայսր, թագավորեց 17 օր և սպանվեց իր զինվորների կողմից), մյուս Ավրելիանոսը (Ավրելիանոս Սուցիոս Դոմիցիոս - 269/270-275), Տակիտոսը (Տացիտ - 275-276), Փղոռիանոսը (Ֆլորիանոս Մարկոս Աննիոս, Տացիտի եղբայրը, որը թագավորել է ընդամենը վեց ամիս, 276 թվականին և ինքնասպանություն գործել՝ լսելով, որ զորքը կայսր է ընտրել Պրոբոսին), Պրոբոսը (Պրոբոս Մարկոս Ավրելիոս - 276-282), որն էլ, ըստ Մ. Խորենացու, «Արտաշիրի հետ խաղաղություն կնքելով, մեր երկիրը բաժանել է, սահմանացույց փոսեր կտրելով»<sup>30</sup>: «Փոսեր կտրելը» կարող էր լինել 276թ., քանի որ Պրոբոսն այդ թվականին է դարձել կայսր, որից հետո հեռացել է այնտեղից և այլևս Արևելք չի վերադարձել: Եվ քանի որ ինքը՝ Որմիզդ-Արտաշիրն էլ, դառնալով ամբողջ Իրանի թագավոր, մահացել է 273թ., հետևաբար Պրոբոսն այդ պայմանագիրը, որն, անկասկած, պատմական իրողություն է, կնքել է Իրանի թագավոր Վահրամ (Վռամ, Վարախռան) Առաջինի (273-276) հետ, որը նույնպես, ըստ սովորույթի, կրել է նաև Արտաշիր անունը: Դրանով նա Իրանին է զիջել Մեծ Հայաստանն ու այդ գնով պարսկական սահմանում ապահովելով խաղաղություն՝ գնացել Եվրոպա, որտեղ օրհասական պատերազմ էր մղվում գերմանացիների դեմ: Կյունտոս կայսեր անվան տակ Խորենացին նկատի է ունեցել Պրոկոլոսին (276-282):

11. Մ. Խորենացին ճիշտ է նշել նաև կայսրեր Կարոսի (282-283), նրա որդի Կարինոսի (282-285) և հետո՝ Դիոկղետիանոսի (Գայոս Ավրելիոս Վալերիոս Դիոկղետիանոս - 283/284-305) թագավորման տարիները<sup>31</sup>: Դրանք համընկնում են

<sup>29</sup> **Трибеллий Поллион**. Тридцать тиранов. Из кн.: Властители Рима. Пер. С. П. Кондратьева, под ред. А. И. Доватора. «Наука», М., 1992; **Эдвард Гиббон**. Упадок и разрушение Римской империи. М., 2005.

<sup>30</sup> **Սովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Եր.պետ. համալսարանի հրատ., 1981, էջ 260-263:

<sup>31</sup> Մ. Խորենացու թվարկած կայսրերի թագավորման տարեթվերը և նրանց լրիվ անունները լրացվել են մեր կողմից, ըստ հետևյալ գրքերի տվյալների. **Эдвард Гиббон**. Упадок и разрушение Римской империи. М., 2005; **К. Рыжов**. Все монархи мира. Греция, Рим, Византия. М., 2001; **Е. В. Федорова**. Императорский Рим в лицах. Ростов на Дону, Смоленск, 1998; **Е. Дж. Бикерман**. Хронология древнего мира, М., 1975; Властители Рима. М., 1992.

հռոմեական աղբյուրների և Ազաթանգեղոսի երկում պարունակած տվյալների հետ, որոնց հետ համեմատության մեջ կարելի է ճշգրիտ կերպով որոշել Տիրիդատ Երրորդ Մեծի թագավորման տարիները: Նշված կայսրերից Կարուսը և Կարինոսը կռվել են նախ՝ գերմանական կամ արևմտյան ճակատում, և նրանց հետ, ըստ Խորենացու, այնտեղ կռվել է նաև ապագա Տիրիդատ Երրորդ Մեծը, և եթե հաշվի առնենք Ազաթանգեղոսի հաղորդումն այն մասին, որ նրան թագավոր են օծել հենց գերմանական ճակատում, այնտեղ կատարած քաջագործություններից հետո<sup>32</sup>, ապա դեպքերի տրամաբանական հաջորդականությունը լրիվ պարզ է դառնում: Կարելի է փաստել, որ նա թագադրվել է հենց այս կայսրերի կողմից, մինչև 282թ. կամ այդ թվականին: Նրանք բոլորը նույն 282 թվականին տեղափոխվել են արևելյան ճակատ, մի քանի ճակատամարտերից հետո գրավել Իրանի մայրաքաղաք Տիգրոնը, ազատագրել Մեծ Հայաստանը և հանձնել Տիրիդատ Երրորդին՝ նրան թագավորեցնելով նաև դե ֆակտո, որի համար էլ փաստորեն տեղափոխվել էին Արևելք<sup>33</sup>: Ինչ վերաբերում է Խորենացու այն հաղորդմանը, ըստ որի Տիրիդատ Երրորդ Մեծը թագավորել է Դիակղետիանոսի երրորդ տարում<sup>34</sup>, այն է՝ 386/387թթ., ապա այս կապակցությամբ պետք է նշել, որ այդ հաղորդումը նույնպես տրամաբանական հակասություն չի պարունակում, այլ նույնիսկ օգնում է վերականգնել պատմական ճշմարտությունը: Այդ ժամանակ, մեծաթիվ զորքերով մտնելով Մեծ Հայաստան՝ այս կայսրը հայ իշխաններին համախմբելու և հայ թագավորի իրավունքները ճանաչելու փաստը վերահաստատելու համար հանդիսավոր կերպով նորից թագադրել է Տիրիդատ Երրորդին, այս անգամ արդեն՝ հայկական ավանդությամբ և հայկական զրադաշտական մեծանուն, որի նկարագրությունը տրված է Ազաթանգեղոսի երկում: Անկասկած, դրա անհրաժեշտությունը ծագել է այն պատճառով, որ կայսրեր Կարուսի և Կարինոսի կողմից Տիրիդատին հռոմեական արարողակարգով և Հայաստանից դուրս թագավոր օծելը ճանաչվել է ոչ այնքան օրինական, և այդ պատճառով Հայաստանում մղած պատերազմի ժամանակ ոչ բոլոր նախարարներն են աջակցել նրանց: Դա եղել է նաև պարսիկների հերթական հնարավոր վերադարձից վախենալու պատճառով, մի բան, որը քանիցս մինչ այդ կրկնվել էր և նախարարներին պետք են եղել ամուր թագավորություն հաստատելու երաշխիքներ: Հենց Անահտի տաճարում կատարված այդ թագադրության ժամանակ էլ տեղի է ունեցել Գրիգոր Լուսավորչի «մերկացումը» և բանտարկությունը, որին հետևել է այս թագավորի հակաաղանդավորական նշանավոր հրամանագրերի հրապարակումը<sup>35</sup>: Այդ ժամանակից սկսած էլ Մեծ Լուսավորիչը կարող էր և Խոր Վիրապում անցկացրել է 13-15 տարի, այնտեղից ազատագրվել 298-301 թթ., հայտնի

<sup>32</sup> **Ազաթանգեղոս**, նույն տեղը, էջ 36 (37); **Թ. Մոմգեն**, նույն տեղը, էջ 355:

<sup>33</sup> **Թ. Մոմգեն**, նույն տեղում, էջ 343-344:

<sup>34</sup> **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Եր. պետ. համալսարանի հրատ., 1981, էջ 273: **Jacob Burckhardt**, Die zeit Konstantins Des Grossen. Alfred Kröner Verlag, Stuttgart, 1959; **Joseph Vogt**, Konstantin der Grosse und sein Jahrhundert. Verlag F. Brugmann. München, 1960.

<sup>35</sup> **Ս. Ա. Խաչատրյան**, Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Երևան, 2010:

դեպքերի հետևանքով և գլխավորել քրիստոնեական հեղափոխությունը:

#### **ЗНАЧЕНИЕ ПЕРИОДОВ ПРАВЛЕНИЯ ХОСРОВА II, ХОСРОВА III И ТРДАТА III**

*C. A. Хачатрян*

В статье автор при помощи правовых аналитических методов реконструирует третье столетие и доказывает, что армянские цари Хосров II (215/216 – 237гг.до н.э), Хосров III (256 – 268 гг.до н.э), и его сын Трдата III (с 282г. до н.э.) правили в Великом Айке.

#### **THE SIGNIFICANCE OF THE DOMINATION CENTURY BY KHOSROV THE SECOND, KHOSROV THE THIRD AND TRDAT THE THIRD**

*S. A. Khachatryan*

The Significance of the Domination Century by Khosrov the Second, Khosrov the Third and Trdat the Third is being discussed in the article. Carrying out some analyses with the help of juridical methods, the author observed the third century and proved that Armenian King Khosrov the Second (215/1216 – 237 BC), Khosrov the Third (256 – 268 BC) and his son Trdat the Third (from 282 BC) dominated in Great Hayk.

#### **BESTIMMUNG DER HERRSCHAFTSZEIT VON KHOSROV II, KHOSROV III. UND TRIRIDAT III**

*S. A. Khachatryan*

In dem Artikel „Bestimmung der Herrschaftszeit von Khosrov II, Khosrov III. und Triridat III.“ rekonstruiert der Autor mit Hilfe der juristischen Analysemethode die Ereignisse des dritten Jahrhunderts und beweist, dass der armenische Zar Khosrov II. von 215/216 bis 237 n. Chr. Khosrov III. von 256 bis 268 n. Chr. und sein Sohn Triridat III. von 282 n. Chr. in Großarmenien herrschte.

#### **ОСОБЕННОСТИ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В НЕКОТОРЫХ ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ**

**А. Г. АПРОЯН**

*Кандидат юридических наук*

В настоящее время, когда решение социальных проблем по воспитанию молодежи стало первоочередной задачей государственных и общественных органов, неизмеримо возросли возможности правового воздействия на совершенствование системы воспитания и образования подрастающего поколения, его гражданское, трудовое и интернаци-